

# ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆԸ

## ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՄԷԶ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐԸ, Հոկտ. 13

(Մեր մասնաւոր քղբակցին)

Համազգային կրկնակ փառապանծ յորելեանները հոս ալ տօնուեցան։ Օրեր առաջ ամէն ջանք թափուած էր ժողովրդեան բոլոր խաւերուն մէջ ոգեւորութիւն առաջ բերելու համար։ Շարաթ երեկոյ ազգ։ երկսեռ ուսուցչութիւնը տեղւոյս մտաւորականաց շքեղ երեկոյթ մը տուաւ, ինչ որ աննախընթաց մըն է Տիգրանակերտի տարեգրութեանց մէջ։ Այսաւ տիրոս էֆէնտի Աղդտրեան ազնիւ մէսթով մը ուսուցչութեան ըրած ծախքերուն կէսը ինք վճարեց ինքնարերաբար։ Թէպէտ նախօրօք կարգադրութիւններ եղած էին ջահագնացութիւններ և լուսավառութիւններ ընելու, սակայն յարուցուած արդելքներուն վրայ թողուեցաւ այդ ծրագիրը։

Շարաթ երեկոյ կաթոլիկ հասարակութիւնը լուսազարդեց իր զանգակատունը, յաջորդ օրն ալ զանդակը հնչեցնելու և հանդէսէն բաժին մը առնելու իր աշակերտաց համար տրամադրութիւն յայտնեց։ Որչտփ որ կաթոլիկ կղերը այս մեծ տօնին անտերբեր ու անհամակիր գտնուեցաւ իր ներկայութիւնը իսկ զլանալով։ այսու ամենայնիւ կաթոլիկ երիտասարդաց ցուցուցած խանդավառ մասնակցութիւնը յուղեց ազգային ցանկալի միութեան ջատագովներն և

խոր տպաւորութիւն ձգեց խորհող ու  
խոհուն մտքերու վրայ : Խանութները  
փակ պահելու կարգադրութիւնները  
ձախողեցան : Կիրակի , յետ եկեղեց-  
ւոյ աւարտման , շքեղ հանդէս մը  
տրուեցաւ ազգ : Վարժարանի հան-  
դիսամրահին մէջ , հազարէ աւելի  
բաղմութիւն գունդ գունդ դիմած էր ,  
առանց դաւանանքի ու դասակարգի  
խտրութեան , միասիրտ և միահա-  
ղոյն , ըմբոչխնելու համար յարդան-  
դի ու հիացումի այդ վեհաշուք հան-  
դէսը : Եւ այդ վեհ ու վսեմ օրը ,  
Տիգրանակերտցին այդ տրամադրուած  
վայրին մէջ , Ս . Մեսրոպի ու Մեղա-  
պարտ Յակոբի ու Արգարի , յորել-  
եաններուն առ յաւէտ խնկելի յուշե-  
րով հոգեպարար՝ հրճուեցաւ և փա-  
ռաւորեց իր զիրն ու զիրքը անմահ :  
Բայց տարաբախտօրէն հանդիսասրա-  
հին չորս պատերը շատ նեղ կուգա-  
յին պարփակելու խանդավառ ու խե-  
լայեղ հոծ հայութիւնը անդույս : Դե-  
ղեցիկ սեռը դուրս ձգուած էր յա-  
կամայս : Եկեղեցին զլացուած էր , և  
կարգադիր յանձնախումբը ստիպուած  
էր գոհանալ այդ անձուկ վայրով :  
Ու միայն եկեղեցին , մէկ երկու կը-

տոր սպաս ու գայնակը խնայուած էր  
զանազան հաշիւներով :

Յաջորդ կիրակի ևս հանդէս մը  
տեղի ունեցաւ մողովրդեան բուռն  
փափաքին ու պահանջին վրայ և այս  
անգամ երկսեր , սա նամէհրամական  
անիմաստ քողքը մէկ կողմ ծալլած :  
Խօսեցան կիներ ու օրիորդներ :

\* \* \* Տարիէ մը ի վեր տեղույս մէտ-  
րիֆին ու իր պաշտօնեաներուն ինչ-  
պէս նաև սիատտիոի և «Տարիւլ-  
մուալիմոի ուսուցիչներուն մէջ խուլ  
հակառակութիւն մը կար : Մէտարիֆն  
ու իտատիի մէկ քանի ուսուցիչներ  
տեղափոխուեցան : Մէտարի՞ֆը թէ իր  
գրադիրը , չենք զիտեր որ մէկին չա-  
րամտութեամբ հայ ուսուցիչներու  
արձանագրութիւնը չէ ձգուած նա-  
խորդ տարրւոյ օրինական արձանա-  
գրութեանց մէջ : Ալժմ առաջնորդա-  
ւանի զիմումին վրայ գրագիրը մէտ-  
արիֆին վրայ կը ձգէ յանցանքը :

ՑԱՐՄԱՅՐ

\* \* \* Գոնիայի ձէնանեան Գոլէճի սո-  
կան իկոնիոն կը գրէ .—Ազգային մեծ  
տօնը հոս ալ իր հրաշալի ազդեցու-  
թիւնը ի յայտ բերաւ : Գոլէճս տնցեալ